№ 119 ՉՈՐԵՔՇԱԲԹԻ ՅՈՒՆԻՍԻ 9

1904

ԵՐԵՍՈՒՆԵՐԿՈՒԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՉՈՐԵՔՇԱԲԹԻ ՅՈՒՆԻՍԻ 9 № 119

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 բուբլի. կէս տարվանը 6 բուբ.
Առանձին համարները 5 կոպէկով.

Թիֆլիսում գրվում են խմբագրատան մէջ.

Մեր հասցէն. Тифлисъ, Редакція „Мшакъ“.
Կամ Tiflis, Rédaction „Mschak“.
Տելեֆոն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի և տօն օրերից).

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով.

Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր տողատեղին 10 կոպէկ.
Տելեֆոն № 253.

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Լաօդունի թերակղզում.—ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Աղէտ Ներքին-Ագուլիսում. Գր. Միրզայեան՝ Արցունքներ. Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Պատերազմի շուրջը. Արտաքին լուրեր.—ՀԵՌԱԳԻՐՆԵՐ.—ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.—ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ «Մուրճի» քննադատին։

ԼԱՕԴՈՒՆԻ ԹԵՐԱԿՂԶՈՒՄ

Մի շարք յօդուածներով մենք ծանօթացրինք ռազմագէտների կարծիքների հետ պատերազմող կողմերի զօրքերի շարժումների մասին։ Ռազմագէտները չեն հաւատում, որ գեներալ Կուրոպատկինը նպատակ դրած լինի գնալ իր զօրքով դէպի Պօրտ-Արթուր՝ նրան ազատելու համար։ «П. В.» լրագիրը առաջ է քերում «Koelnische Zeitung» թերթի կարծիքը, որով անհերքակայելի է համարվում մի այդպիսի արշաւանք, որովհետև նա կարող է շատ վտանգաւոր լինել մանչուրական բանակի համար։ «Morning Post» լրագիրը ենթադրում է, որ նեղկայումա եապօնական զօրքերը պրդէն պատրաստ են իրանց նաւատորմի հետ միասին յարձակվելու Պօրտ-Արթուրի վրա։ Ուստեղ մթերքը հայթհայթվում է նաւատորմի միջոցով և զօրքը իր թիկունքի կողմից ապահովված է Նանշանի դիրքերով։ Իսկ եթէ ռուսաց զօրքերը շարժվեն դէպի հարաւ, Վաֆանդեանից դէպի Պօրտ-Արթուր, այն ժամանակ Կուրոկիի եապօնական զօրքը կը սկսէ յարձակում գործել Կուրոպատկինի զօրքի վրա։

Պօրտ-Արթուրի շնորհիւ եապօնական զօրքի մի մեծ բազմութիւն արգելվել—մնացել է այդ բերդի շուրջը։ Աչքի առաջ ունենալով այդ հանգամանքը, «Neue Freie Presse» լրագիրը (տես Н. В.) այն կարծիքն է յայտնում, որ եապօնացիները Պօրտ-Արթուրի պաշարման պատճառով թուլացնում են հիւսիսում շարժումները, որոնք այնքան ուժեղ և յաղթական կը լինէին, որքան վաղ նրանք տեղի ունենային։ Եապօնացիները Եալուի պատերազմից յետոյ եթէ անմիջապէս սկսած լինէին հալածել ռուսաց զօրքերը, նրանք հիմք կունենային սպասելու շատ մեծ հետևանքներ իրանց համար։ Այն ժամանակից անցել է վեց շաբաթ, որի միջոցում գեներալ Կուրոպատկինը կարողացաւ Ռուսաստանից ստանալ թարմ օժանդակութիւններ, իսկ եապօնացիները սպառում են, պաշարման գործերի պատճառով, իրանց ոյժերը և թուլացնում զօրքը։

Պաշտօնական հեռագիրներից մենք գիտենք, որ Պօրտ-Արթուրի և Լաօեանի միջև, Վաֆանգօուի կողմերում, գործում են ռուսաց զօրքի գնդերը, որոնք ունեցել են շատ լուրջ ընդհարումներ եապօնական զօրքի հետ։ Այսօրվայ հեռագիրները տալիս են մի քանի տեղեկութիւններ այդ ընդհարումների բնաւորութեան մասին, իսկ ստոյգ մանրամասնութիւնները կը պարզվեն փոքր ինչ ուշ, որովհետև ընդհարումների այդ շրջանը դեռ չէ վերջացել։

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԱՂԷՏ ՆԵՐՔԻՆ-ԱԳՈՒԼԻՍՈՒՄ

Մորեխի տուած ջնասները կարծես բաւական չէին խեղճ ժողովրդին, երկինքն էլ մի կողմից է իր բարկութիւնը թափում մեր գլխին։

Երէկ, մայիսի 31-ին, ճաշից յետոյ ժամը երեք և կէսին Ներքին-Ագուլիսում տասկալի կարկուտ տեղաց կեռասի մեծութեան, որը տևեց տասնեօթ րոպէ։ Բարձրացաւ սարսափելի հեղեղ և, ինչպէս պատմում են հասակաւոր մարդիկ, Ներքին-Ագուլիսում այդպիսի հեղեղ չեն տեսել։ Զմեռվայ սառատիկ ցրտերից ազատված պտուղները բոլորը կարկտահար եղան։ Գիւղի հարաւ-արևմտեան մասը մեծ վնաս կրեց։ «Կճղնոց» կոչված տարից եկած հեղեղը քանդեց երկու շինութիւն։ Շատ տներ լցվեցին հեղեղի ջրով, որի պատճառով միջի

եղած շերամի որթերը փչացան։ Խեղճ աղքատ գիւղացին իր միակ յոյսը դրել էր շերամից ստացված կոպէկներով հայթհայթելու իր ընտանեկան անհրաժեշտ պիտոյքները, սակայն այդպիսի դժբաղդութեան հանդիպեց։ Շատերը պէտք է վերանորոգեն իրանց շինութիւնները, որովհետև վտանգաւոր է նրանց մէջ նստելը. մէկ կողմից շինութեան հիմքի ճնասվելը, միւս կողմից առած խոնաւութիւնը։ Վնասվողների մեծամասնութիւնը աղքատ դասակարգից են։ Մի քանի տեղ խոռոչներ են առաջացել։ Եթէ Ներքին-Ագուլիսեցիք ուշք չը դարձնեն դրանց առաջը փակելու, ապագայում չափազանց կը ճնասվեն։ Ի՞նչ անէ գիւղում մնացած խեղճ մարդը։ Չէ որ հեղեղատի առաջն առնելու համար նա մի քանի հազար բուբլի ծախք պէտք է ունենայ։ Գիւղում մնացողները աղքատ դասակարգիցն են՝ հարուստները բացակայ են, և ոչ պէտք է մտածէ այդ գործը նախաձեռնելու, եթէ ոչ հարուստները, որոնք եթէ ուշադրութիւն չը դարձնեն աղէտի վրա և իրանց գրամական միջոցներով չօգնեն, պէտք է իրանք էլ զրկվեն գիւղում ունեցած կալուածներից։ Ամեն կողմից լսվում էին լաց ու կոծ, օգնութիւն հայցող և սիրտ մրմնջեցնող ձայներ. շատերը ահ ու սարսափով բռնված փախչում էին ապահով տեղ գտնելու և պատսպարվելու նպատակով, վերցնելով նաև իրանց թանգագին իրերը։

Սայլով երթևեկութիւնը, խճուղային ճանապարհի փչանալու պատճառով, դադարել է. պօստը ձիով են բերում։ Բարեբաղդաբար մարդկային զոհեր չը կան։ Միայն մի ծերունի է ընկնում ջրի ուժեղ հոսանքի մէջ, որը շուտով փրկվում է օգնութեան հասած մարդկանց շնորհիւ։

Հեղեղի ուղղութիւնը ամեն անգամ մի և նոյն է. հեշտութեամբ կարելի է վտանգաւոր տեղերում պատնէշներ կանգնեցնել։ Գիւղացիները իրանց անտարբերութեան շնորհով ստանում են ներկայ պատիժը։

**

ԳՐ. ՄԻՐԶԱՅԵԱՆ՝ ԱՐՑՈՒՆՔՆԵՐ

Մեր առաջ գրված է երիտասարդ երաժիշտ Գր. Միրզայեանի (Ս. Պետերբուրգի կոնսերվատորիայից) առաջին երկը—մի ինքնուրոյն հայերէն լեզուով օրհնաս—«Արցունքներ» վերնագրով։ Այն բանաստեղծութիւնը, որ ոգևորել է երաժշտին, պատկանում է սիրոյ ցաւերի նուրբ արտայայտիչ բանաստեղծ Ա. Իսահակեանի գրչին և կրում է նրան յատուկ մելամաղձոտ բնաւորութիւնը։

Մեծ համակրութեամբ ողջունում ենք երաժշտի առաջին փորձը, որ ապացոյց է նրա շնորհալիութեան և լուրջ երաժշտական կըրթութեան։

Երգի մեղեդին արևելեան՝ թախծով լի բնաւորութիւն ունի, իսկ դաշնակցութիւնը շատ նուրբ է կազմված և ապացոյց է երաժշտի գեղեցիկ երաժշտական ճաշակի։ Նրա տաղանդը շատ քնքոյշ, լերկ բնաւորութիւն է արտայայտում, բայց այդ ենթադրութիւնը կազմված է միայն նրա առաջին երկի հետ ծանօթանալուց յետոյ։ Ցանկանք շնորհալի երաժշտին աւելի թեւաւորվել ու հարստացնել մեր աղքատիկ երաժշտական գրականութիւնը նորանոր թէ ինքնուրոյն, թէ ժողովրդի սքանչելի մեղեդիներից հիւսված երկերով։

Այդ օրհնանը հրատարակված է Պետերբուրգ, շատ մաքուր, առաջին երեսը մի գեղեցիկ վինիէտ (виньетка) ունի արևելեան ճաշակով, որ պատկանում է Գարեգին Երիցեանի վրձինին։ Գինը շատ էժան է—35 կոպ. և անտարակոյս շատ կը տարածվի մեր երաժշտասէրների մէջ։

Մարգարիտ Բաբայեան։

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Կովկասի բժշկական ընդհանուր վարչութիւնը շրջաբերականով դիմել է երկրի բոլոր նահանգապետներին և խնդրել, որ նրանք յայտնեն իրանց կարծիքներն ու դիտաւորութիւնները Կովկասում գիւղական-բժշկական նոր կանոնագրութեան ներմուծման առիթով։ Նրանցից խնդրում են, օրինակ, հաղորդել, թէ որ տեղ են գտնվում հիւանդների գիւղական ընդունարանները, որ այժմ պէտք է վերածվեն փոքրիկ հիւանդանոցների. դրանցից որոնք պահանջում են վերանորոգութիւն և որքան

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

«ՄՈՒՐՃԻ» ՔՆՆԱԴԱՏԻՆ

Մեզաականները շատ էին ափրում կրկնել, թէ Արծրունին հասկացողութիւն չունի իր ազգի անցեալի մասին, ծանօթ չէ հայոց պատմութեան։ Պ. Տ. Յովհաննիսեանն էլ իր յօդուածի մէջ հարկաւոր է համարել առանձին խնամքով ընդգծել մի հանգամանք, որ, նրա կարծիքով, ցոյց է տալիս նրա «անտեղեակութիւնը հայոց պատմութիւնից»։

Մենք, ի հարկէ, չենք կարող ասել, թէ Գրիգոր Արծրունին պատմագէտ էր և ուսումնասիրութեան առարկայ էր դարձրել հայոց պատմութիւնը։ Գուցէ պ. Յովհաննիսեանը իր խոստացած մանրամասն հետազօտութեան մէջ պիտի ապացուցանէ Արծրունու «անգիտութիւնը». մենք չը գիտենք այդ և չենք էլ զարմանայ, եթէ այդպիսի ապացոյց տեսնենք։ Բայց այն փաստը, որ բերել է պ. Յովհաննիսեան իր այժմեան յօդուածի մէջ, վերին աստիճանի անպէտ է։

Գրիգոր Արծրունին մի տեղ գրել է. «Մեր այժմեան օրագիրներում գործածված գրերը նոյն են, որոնք IV դարում մեր Գրիգոր Լուսաւորիչն էր գործ ածում իր աստուածաբանական գրուածքներում»։ Եւ որովհետև յայտնի է, որ հայոց տառերը գտնվել են Լուսաւորչից մօտ մի դար յետոյ, ուստի պ. Յովհաննիսեանը հանդիսաւորութեամբ ասում է, որ «Գրիգոր Արծրունին, հայ լինելով, չը գիտէր այդ»։

Մենք էլ, ճիշդն ասած, զարմանում ենք, որ պ. Յովհաննիսեանը, հայ լինելով, չը գիտէ մի ուրիշ բան,—այն ժամանակը, երբ գրված են Արծրունու այդ խօսքերը։

Պ. Յովհաննիսեանին, անշուշտ, յայտնի է, որ մինչև այժմ մենք ունենք հայոց հին գրականութեան մի հատ պատմութիւն միայն, Հ. Զարբհանալեանի գրած պատմութիւնը։ Այդտեղ ասված է, թէ Գրիգոր Լուսաւորիչը իր «Յաճախապատումը» գրել է հայերէն լեզուով։ Եւ ոչ միայն Գրիգոր Լուսաւորիչը, այլ և նրա գործերը նկարագրող Ագաթանգեղոսը նոյնպէս հայերէն է գրել։ Անհեթեթութիւն է, չէ։ Բայց այդ բանը ասել են Մխիթարեանները, որոնց պատմագիտութեան մասին պ. Յովհաննիսեանը, յուսով ենք, կասկածներ չի ունենայ։ Եւ Մխիթարեանները առել են այսպէս, որովհետև այն ժամանակ Խորենացու հեղինակութիւնն էր տիրում։ Իսկ Խորենացու պատմութեան մէջ ասված է, թէ Մեսրոպը գտաւ ձայնաւոր տառերը։ Հապա բաղաձայնները։ Կարծում էին, թէ դրանք գոյութիւն ունէին մինչև Մեսրոպը և այդ կարծիքը հիմք էր գտնում մեր պատմագիրների մի քանի մութ ակնարկների մէջ, որոնք խօսում են հին նշանագրերի մասին։ Ինքը, Զարբհանալեանը, նոյնպէս այն կարծիքի է, որ տառեր կային Մեսրոպից առաջ, բայց չէին գործ ածվում։ Այդ կարծիքին էին և շատ ուրիշները, օրինակ, Գարագաշեանը («Ուսումն գիտութեանց») գրքի մէջ։

Արծրունին սովորել է Մխիթարեանների մօտ։ Եւ ասելով, թէ Լուսաւորիչը գրում էր հայերէն տառերով, անգիտութիւն է նա ցոյց տուել։ Եթէ այո, ուրեմն անգէտ են և այն մարդիկ, որոնք հաւատացած էին, թէ «Յաճախապատումը» Գրիգոր Լուսաւորչի աշխատութիւնն է, գրված հայերէն։ Շնորհ արէք, պ. Յովհաննիսեան. Վարդան պատմագիրը դրականապէս ասում է, թէ Մեսրոպից առաջ հայերէն տառեր կային. և սակայն, ոչ ոք նրան, այդ իսկ պատճառով, չէ անուանել «անգիտութիւն»։ Կայ պատմութեան սխալ ըմբռնում, որ բոլորովին անգիտութիւն չէ նշանակում։ Այժմ միայն, երբ պատմական քննադատութիւնը ճգնում է պարզել Խորենացու, Ագաթանգեղոսի և ուրիշ հեղինակների էութիւնը, կարելի են հաձարում ասել, որ Մեսրոպից առաջ հայերէն գրականութիւն չը կար, թեկուզ դարձեալ հանելուկ է մնում, թէ այս ինչ հին նշանագրեր էին, որ սկսեց գործ ածել Մեսրոպը նախ քան իր գիւտն անելը։

Եթէ Գրիգոր Արծրունին լեզուագէտ լինէր, պատմական գիտութեամբ զբաղված լինէր, գուցէ և իր սեփական հայեացքը յայտնած լինէր մեր տառերի մասին։ Բայց նա ասել է այն, ինչ սովորել է, իսկ իր սովորածը ստուգելու, վերլուծելու ոչ կոչում է ունեցել, ոչ նպատակ։ Մենք ու դուք էլ, պ. Յովհաննիսեան, մի ժամանակ հաւատացել ենք, որ մեր նախահայր Հայկը կուռել է Բէլի դէմ, որ Շամիրամը Արայի վրա սիրահարված էր։ Ենթադրենք, թէ այն ժամանակ մենք վերցրած լինէինք ու մեր իմացածը տպագրած։ Եւ ի՞նչ։ Այսօր կը գտնվի՞ր մի ուրիշ Յովհաննիսեան, որ ասէր, թէ մեր գրուածքը ցոյց է տալիս մեր «անգիտութիւնը հայոց պատմութիւնից», քանի որ այժմ ուրարտեան արձանագրութիւններ կան, Ասորեստանի նոր գտած պատմութիւն կայ...

Եթէ ճիշտ որ շատ լաւ, շատ իմաստուն բան է «տասը չափել, մի կտրել», այդպէս պէտք է անել մանաւանդ այն ժամանակ, երբ դատաստան էք անում այնպիսի գործիչների վրա, որոնք, ինչպէս դուք էք ասում, «մտքի իշխան» են եղել։ Մինչդեռ թւում է որ պ. Յովհաննիսեանը մի անգամ էլ չէ չափել, բայց շտապել է կտրել։

Եւ ահա նա այսպէս է բնորոշում Արծրունուն։ Դա մի գրող էր, «որի ոյժի և ընդունակութիւնների մաքսիմումը կարող էր արտայայտվել միմիայն բանակռուի դաշտում»։ «Ո՛չ, դա անարդար, գլխավերև ձևակերպութիւն է։ Բանակռիւը իսկական մաքսիմումի հետևողութիւնն էր։ Արծրունին զբաղված չէր ուրիշների ասածների դէմ բանակռիւ մղելով, նա ինքն էր, ընդհակառակը, հարկադրում, որ ուրիշները, ամբողջ խմբերով մարդիկ, գործ ու նպատակ դարձնեն նրա դէմ կռուելը։ Մաքսիմումը այն հրապարակախօսական կրակն էր, որ գիտէր ժամանակին խօսք արտասանել,—կարուկ, պարզ ու խիստ խօսք, որ ժամանակից հրատապ հարցեր էր գնում, շարժվել, բռնկվել էր հարկադրում։ Առաջաւոր մարտնչողին վիճակված է ոչ միայն գրել, մտքեր ու գաղափարներ գնել, այլ և պատերազմով պաշտպանել նրանց։ Դա անխուսափելի է, դա բնական հետևանք է։ Եւ մեզանում այնպիսի հանդարտ բնաւորութիւն, ինչպիսին էր Ստեփանոս Նազարեանցը, ազատված չէր այդ անհրաժեշտութիւնից։

Յաճախ ի՞նչ տեսակ մտքեր են զբաղեցնում մարդկանց։ Պ. Յովհաննիսեան յանկարծ ուզեցել է վճռել՝ կարող էր Արծրունին ամսագրի աշխատակից դառնալ։ Եւ գտել է, որ մի ամսագրում Արծրունին «կը լինէր օգտակար, բայց թերևս միջակ հրապարակագիր»։ Ինչո՞ւ։ Մի՞թէ հրապարակախօսութիւնը ջոկ է ամսագրում և ջոկ՝ լրագրում։ Շատ ցանկալի կը լինէր, որ պ. Յովհաննիսեանը ցոյց տար թէ ինչո՞ւ մի ամսագրի մէջ տեղ չէին ունենայ Արծրունու բազմաթիւ մեծ և փոքր յօդուածները։ Մի՞թէ պ. Յովհաննիսեան կարծում է, թէ այն

ծախքի հարկաւորութիւն կայ Հայէն, Հայէն։

—

Ցնդուրական կանոնադրութեան 121-դ յօդուածի հիման վրա վերջնականապէս դադրած է ճանաչվում «Le Caucase illustré» ֆրանսերէն շաբաթաթերթը, որ հրատարակվում էր Թիֆլիսում ֆրանսիացի Ժիլ Միւրիէի խմբագրութեամբ։

—

Թիֆլիսում թուրքերէն լեզուով հրատարակվող «Շարքի Ռուս» լրագիրն այսօրվանից սկսած՝ լոյս է տեսնելու աՀեն օր։ Ուրեմն՝ Թիֆլիսում կը լինի այսուհետև թուրքերէն մի հատ ամենօրեայ լրագիր։

—

Յունիսի 7-ի երեկոյեան նիստին Թիֆլիսի քաղաքային խորհուրդը որոշեց նոր քաղաքագլխի ընտրութիւնը կատարել հոկտեմբերի սկզբին։

—

Ժողովրդական լուսաւորութեան գիտական կոմիտէը յունիսի 1-ին վերջացրեց նոյն մինիստրութեան իրաւասութեան տակ գտնված գիմնազիաների, պրոգիմնազիաների և պատրաստական դպրոցների ծրագիրների նախագիծը։ Այդ նախագծի համաձայն ենթադրվում է բաց անել երկու տեսակ գիմնազիաներ—մէկը՝ երկու հին լեզուներով, միւսը՝ առանց յունարէնի, բայց նրա փոխարէն բնական գիտութիւն մտցված։ Ենթադրվում է թոյլատրել այդ տեսակի գիմնազիաներ բաց անելու, պետականներից զատ, և մասնաւոր անհատներին ու համայքներին։

—

Եապօնիայի դէմ մղվող պատերազմի առաջացրած ծախքերի պատճառով՝ Ուլուխանլուից դէպի պարսկական սահմանը կառուցվող երկաթուղու համար 1904 թվին նշանակված ծախքը կրճատվել է 2 միլիոն ռուբլով, իսկ նոյն այդ թվականի Կարսի գծի ծախքերը պակասեցված են 450,000 ռուբլով։

—

ԲԱԳՈՒԻՑ մեզ հաղորդում են .«Ամսիս 5-ին, շաբաթ օր, երեկոյեան ժամը 8-ին, նշանակված էր Բագուի Հայոց Մարդասիրական ընկերութեան արտակարգ ընդհանուր ժողովը, որը պէտք է զբաղվէր հետևեալ կարևոր հարցերով. 1) գրադարան-ընթերցարանի գործի վիճակը որոշել, նրա փակվելու պատճառով, իշխանութեան կարգադրութեամբ. 2) որբանոց հիմնելու խնդիրը. 3) Աշխատանքի Տան կազմակերպութեան մասին զեկուցումն։ Սակայն չը նայած այդքան կարևոր և լուրջ օրակարգին, ընկերութեան անդամները դատապարտելի անտարբերութիւն ցոյց տուին և հազիւ 18 հոգի եկան ժողովի. այդ պատճառով ժողովը յետաձգվեց և նշանակվեց յունիսի 12-ին, շաբաթ, երեկոյեան ժամը 8-ին։ Ցոյս ունենանք, որ գոնէ այս անգամ ընկերութեան անդամները կը թօթափեն իրանց անտարբերութիւնը և լրջութեամբ կը վերաբերվեն իրանց պարտաւորութիւններին, ի նկատի ունենալով հարցերի կարևորութիւնը»։

—

ԱԼԷՔՍԱՆԴՐՈՊՕԼԻՑ գրում են մեզ հետևեալը. «Սոսկալի տպաւորութեան տակ ենք գրում այս տողերը։ Այսօր առաւօտեան ժամը մօտ 9-ին Բերութեան և Գեներալսկիյ փողոցների խաչաձև միացման տեղում մի սարսափելի արիւնոտ դէպք տեղի ունեցաւ։—Մի հայ սայլապան Բերութեան փողոցի զառիվայրից բեռնված ֆուրգօնով ցած իջնելիս, չը կարողանալով պահել ձիերին, եկաւ իր սայլով կպաւ փողոցի կենտրօնում ցցած լապտերի սեանը։ Ընդհարումից ջախջախվեց և վայրկենապէս մահացաւ սայլապանը, և հիմքից կոտրվեց ահագին սիւնը։ Այն փողոցը, որի ուղիղ մէջ տեղում, կարծեմ վաշինգտօնեան լապտերի ահագին սիւն—գերանն է ցցած՝ երկու կողմից զառիվայր է. փողոցի լայնութիւնը մայթից մայթ՝ 11 արշին է։ Խաչաձև կտրող փողոցների զառիվայրի այն տեղում, ուր դէպքը պատահեց, և յատկապէս այն տեղից, որ սայլը պիտի անցնէր, սիւնից այն կողմ ընդամենը 5 արշին տարածութիւն կայ։ Այս շրջանը աննպաստ պայմանների հետ կան նաև մի քանի այլ անյարմարութիւններ, որ տեղի վրա տեսնելուց կերևայ միայն. ահա կարծեմ բաւական պարզ ապացոյցներ են ասածիս։ Արդ, մինչ հնարաւոր է այդպիսի նեղ փողոցի մէջ տեղում և այն էլ զառիվայրի վրա սիւն ցցել։ Թէ սայլերն ու կառքերը յաճախ ընդհարում են այդ սիւներին, դրա ապացոյցներն այն նշաններն են, որ մնացել են սիւների վրա։ Անհրաժեշտ է սիւնը անմիջապէս փողոցների անկիւնները տեղափոխել»։

—

ԿԱՐՍԻՑ մեզ գրում են. «Երէկ Երևանի նահանգական դատարանի քրէական բաժնում, նշանակված էր Օլթու շրջանի Ագրակ գիւղացի Մանուկ Յարութիւնեանի և այլոց (թուով 14 հոգի մէկը կին) գործը, որոնց մեղադրում էին պատժական օրինագրքի 265 յօդուածի համաձայն. գործը քննում էին դռնփակ։ Նախագահում էր դատարանի անդամ Եակուբենկո, մասնակցում էին դատարանի անդամ Դէյման և Կարսի հաշտարար դատաւոր Նադիրաձէ. մեղադրում էր պրոկուրոր Գլագօլեվ։ Մեղաւորներին պաշտպանում էր Խօմենտօվսկի։ Դիշերվան ժամը 10-ին, յայտնեցին հետևեալ վճիռը. բանտարկել իւրաքանչիւրին պօլիցիայում երեքական ամիս, համաձայն 38 յօդուածի уст. о наказ. Начал. Мир. Суд.»։

—

Ալէքսանդրօպօլի գաւառի ՋԱՋՈՒՌ գիւղից գրում են մեզ հետևեալը. «Ջաջուռ գիւղը յայտնի է իր զովարար օդով և սառնորակ աղբիւրներով և չը նայելով որ նա գտնվում է երկաթուղու ճանապարհից ոչ հեռու, բայց այստեղ ամարանոց եկող չը կայ։ Այս օրերս այստեղ հասան Ներսիսեան դպրոցի բարձր դասարանի մի խումբ ճանապարհորդ աշակերտներ, որոնք մտադիր են շրջել ամբողջ Շիրակ։ Գիւղացիները ուրախութեամբ նրանց ընդունեցին, մանաւանդ գիւղի նախկին տանուտէրը, որը բարեհաճեց նրանց սենեակ յատկացնել։ Կիրակի այդ պարոնները մեր աղքատ եկեղեցում երգեցին պատարագին, իսկ պատարագից յետոյ կատարեցին հոգեհանգիստ անմահ Գ. Արծրունու յիշատակին։ Հանդէսի ժամանակ պ. Ղազարեանը ժողովրդին մատչելի լեզուով պատմեց Գ. Արծրունու կեանքը և բացատրեց նրա անմահ գաղափարները։ Հանդիսականները շատ յուզվեցին։ Ճառի վերջը, բոլորի բերանից լսվում էր «լոյս լինի նրա հոգին, որ մեր ազգին այդպէս լաւութիւն է արել»։

—

ՋԱՋՈՒՌ գիւղից մեզ գրում են. «Ամբողջ ձմեռ Ջաջուռում և իր շրջակայ գիւղերում տարածված էր եղջիւրաւոր անասունների վարակիչ ցաւը, որը զրկեց Թշուառ գիւղացուն իր ընկեր եզից։ Այժմ շնորհիւ բժիշկների ջանքերի, այդ ցաւը դադարել է»։

—

Զանգեզուրի գաւառի ԽՆԶՈՐԷՍԿ գիւղից մեզ գրում են. «Այս տարի մեր գիւղացիները շատ նեղութիւններ կրեցին անձրևի կողմից։ Արտերը անձրևից փթել են և շատ դժուար է հողագործ գիւղացու վիճակը։ Դեռ ապրիլ ամսում կարկուտ տեղի ունեցաւ և շատ ՀՀասներ հասցրեց թէ այգիներին և թէ արտերին։ Գիւղացիները երկու կողմից յոյսը կտրած մնացել են մտածելով. բացի այդ մօտ օրերս 3000 ռուբլի հաւաքեցին ժողովրդից մորեխի ոչնչացման համար։

—

„Казбекъ“ լրագիրը հաղորդում է, որ Շամախու գաւառն են եկել բաւական թիվ ռուս գաղթականներ, բայց մնացել են աննախանձելի վիճակի մէջ, որովհետև նրանց համար նշանակված հողաբաժինները տրված են վարչութեան կողմից կարճ ժամանակեայ կապալով և վարչութիւնը չէ կարող այժմ և եթէ բաւականութիւն տալ եկած ու խեղճ վիճակի ընկած գաղթականներին

—

Ալէքսանդրօպօլի գաւառի ՋԱՋՈՒՌ գիւղից մեզ գրում են. «Երկար ցրտերից յետոյ, վերջապէս սկսվեցին լաւ եղանակներ. յաճախ տեղում է անձրև, որը շատ է օգնում արտերի աճման։ Գիւղացիները այս տարի լաւ բերք յոյս ունեն ստանալ»։

պատճառով Արծրունին անյարմար կը լինէր ամսագրի մէջ, որ նա մարտնչում էր, բանակռիւ էր մղում։ Բայց եթէ ամսագիրը ոչ մարտնչելու, ոչ բանակռուելու տեղ է, ինչպէս էր որ Միխայլովսկին, տաղանդաւոր մարտնչողը, ամսագրի զարդ էր մինչև իր վերջին շունչը, թէև մի շարք տարիներ նա համարեա միայն պօլէմիկական հրապարակախօսութեամբ էր զբաղված։

Եւ սրա նման անտեղի, մանր հարցեր այնպիսի մի գործի մէջ, ուր պ. Յովհաննիսեանը այնքան առատ նիւթ ունէր հասարակական և գրական մի խումբ հարցերով զբաղվելու, ուր նա կարող էր լայն քննադատական ոգի ցոյց տալ, խոր ու բազմակողմանի կերպով ուսումնասիրելով երևոյթները, նոր հորիզոններ բաց անելով ընթերցողի մտքի առաջ...

Կայ կրիտիկա—բծախնդրութիւն, բայց նա չէ մեզ հարկաւոր, այլ մի կրիտիկա, որ մասնաւոր, փոքրիկ, աննշան պակասութիւնները ընդգծելով չը զբաղվէր, այլ տար համոզիչ, բազմակողմանի, փաստալից ուսումնասիրութիւններ։ Կարծում ենք, որ Գրիգոր Արծրունին իր կատարած դերով արժանի է այդպիսի ուշադրութեան, այդպիսի ուսումնասիրութեան։

Հէնց այդ պատճառով էլ գրեցինք ներկայ յօդուածը։ Մեր նպատակն էր ոչ թէ Գրիգոր Արծրունուն ամեն տեսակ կրիտիկայից բարձր ցոյց տալ—մի բան, որ շատ վիրաւորական կը լինէր նրա յիշատակի և նրա անկեղծ բարեկամների համար,—այլ ապացուցանել, որ պ. Յովհաննիսեան վերին աստիճանի անփոյթ կերպով է վերաբերվել իր գործին, գրել է իր քննադատութիւնը ձախ ձեռքով, գրել է առանց կարողանալու սիստեմի վերածել, դասաւորել այն մտքերը, որոնք ցրված են նրա առջև դրված հատորի մէջ։ Պ. Յովհաննիսեան, ինչպէս երևաց մեր ներկայ յօդուածից, գրքի մի երեսն է կարդում, մինչդեռ հարկաւոր է կարդալ երկու երեսներն էլ, կարդալ ամբողջ, կէտեր ու միջակէտեր չորոնել, այլ գրուածքի ղուշն ու ծուծը, էութիւնը գտնել։

Քննադատը պիտի ունենայ իր սեփական հայեացքները, իր համոզմունքները պարզ ու որոշ կերպով արտայայտելու պարտաւորութիւնը։ Արծրունին շատ որոշ կերպով յայտնել է, որ ինքը ընդունում է միայն այնպիսի գեղարուեստ, որ օգուտ է տալիս մարդուն։ Պ. Յովհաննիսեան պիտի քննէր այդ հայեացքը, որ այնքան տարածված էր վաթսունական թուականներին, պիտի հերքէր նրան, եթէ ինքը հակառակ կարծիքի է։ Բայց նա այդ չէ անում և Գլէբ Ուսպէնսկուն է դիմում։ Արծրունին, Պիսարեվը, Ուսպենսկին իրանց համոզմունքն ունէին և յայտնեցին։ Իսկ մենք չը գիտենք թէ ո՞րն է պ. քննադատի հայեացքը, մինչդեռ սա շատ կարևոր է հասկանալու համար նրա վերաբերմունքը դէպի հեղինակը։

Մի վերջին փաստ ևս, և մենք կը վերջացնենք։ Պ. Յովհաննիսեան գրում է. «Թէ որ աստիճանի միակողմանիութեան և ծայրայեղութեան էր հասնում Արծրունին իր սկզբնական յօդուածներում, երևում է նաև նրանից, որ Պօլ դը Կոկին մարդկութեան ամենաերևելի գրողների շարքն է դասում և ցաւ է յայտնում, որ հայերիս մէջ չը կան Պօլ դը Կոկի նման գրողներ»։

Ճիշդ որ Արծրունին այդ է ասում։ Լսենք նրան։

Եւրօպայում այն գրողներից, որոնք ներկայացրին իրանց ազգի կեանքը իր պակասութիւններով եւ անբարոյականութեամբ, ամենաերևելի սոքա են իմ կարծիքով. Անգլիայում Դիկէնս, Ռուսաստանում Գոգօլ և Պուշկին, Ֆրանսիայում Պօլ դը Կոկ և Դիւմա-որդի։

Երկու հնար կայ մարդիկներին մատնել սովորեցնել. այդ հնարներից առաջինը այն է, երբ գրողը առաջարկում է հասարակութեանը կատարեալ գաղափարներ, կատարեալ մտքեր։ Երկրորդը այն է, երբ գրողը ներկայացնում է հասարակութեանը նրա կեանքի պակասութիւնները։ Առաջինը առաջարկում է հասարակութեանը ձգտել դէպի «լաւը», երկրորդը հրաւիրում է հասարակութիւնը քննել բոլոր նրա մէջ գտնված «վատը»։

Երկուսից ո՞րն է լաւը։

Ես կարծում եմ, որ ինչպէս առաջին, նոյնպէս և երկրորդ հնարները լաւ են և օգտաւէտ են։ Հարկաւոր է, որ մարդս, ձգտելով դէպի լաւը, աչքի առաջ կատարեալ գաղափար ունենայ։ Բայց նմանապէս հարկաւոր է նրան և իր սեփական պակասութիւնները իմանալ և քննել, որ նա հնար ունենայ այդ պակասութիւններից բժշկվելու։

Եւրօպայի հասարակութեան մէջ պակասութիւններ կան, անբարոյականութիւն կայ,—բայց և կան մարդիկ, որոնք այդ պակասութիւնները յայտնում են, անբարոյականութեան երևոյթները քննում են։ Մեր ժողովրդի մէջ, հայերի մէջ մի՞թէ պակասութիւններ չը կան, մի՞թէ անբարոյականութիւն չը կայ,—բայց կա՞ն արդեօք Պօլ դը Կոկի կամ Դիւմաների նման գրողներ, որոնք ներկայացնէին հասարակութեան կեանքը, պակասութիւններ յայտնէին...

Եւրօպացիների մէջ անբարոյականութիւն կայ, բայց մի և նոյն ժամանակ նոքա և գրողներ ունեն, որոնք յայտնում են անբարոյականութիւնը.—մեր մէջ, հայերի մէջ, անբարոյականութիւն կայ, բայց մեր անբարոյականութիւնը չենք յայտնում։

Պարզ հասկանալի է, որ Արծրունին ի նկատի ունի պակասութիւններ նկարագրող վէպի հասարակական նշանակութիւնը։ Ահա ինչպէս է նա վերջացնում այդ յօդուածը։

Եթէ մենք ինքներս ևս մեզ այնքան «թոյլ» ենք համարում կամ զգում, որ Պօլ դը Կոկի ըմանը կարդալով, փոխանակ մտածելու, նորա նկարագրած անբարոյական անձից օրինակ կառնենք և մենք ևս նորա նման անբարոյական կը դառնանք... առաւել լաւ կանենք, որ չը կարդանք։

Հետաքրքրական կը լինէր իմանալ պ. Յովհաննիսեանից, ուրիշ ինչ կարող կը լինէինք ասել մենք, եթէ մէկը հարցնէր, թէ արժէ՞ կարդալ «Նանան»։ Պ. Յովհաննիսեան կարող է ասել, թէ Զօլայի և Պօլ դը Կոկի մէջ տաղանդի տարբերութիւն կայ։ Բայց Արծրունին տաղանդի մասի՞ն է խօսում։ Նա միայն այն է ասում, որ կեանքը ճանաչելու համար պէտք է ծանօթանալ նրա բացասական, անբարոյական կողմերի հետ էլ։ Եւ հէնց այդ պատճառով էլ ասում էր, որ մեր մէջ կայ անբարոյականութիւն, բայց չը կայ նրան նկարագրող։ Արծրունին հեռու էր Թիֆլիսից, չը գիտէր, որ մեզանում էլ սկսվել է անբարոյականութեան մերկացում։ Պ. Սունդուկեանը այն ժամանակ արդէն գրած ունէր իր «Խաթաբալան», որի ամբողջ զարդը անբարոյականութեան խիստ մերկացումն է։ Ասացէք խնդրեմ, մի՞թէ տարբերութիւնը «Խաթաբալայի», «Պէպօի» մէջ պատկերացրած անբարոյականութեան և Զօլայի, Դիւմայի, Պօլ դը Կոկի նկարագրած անբարոյականութիւնների մէջ։ Թէ՞ պ. Յովհաննիսեանի համար վատը, ծածկելին միայն սեռական անբարոյականութիւնն է։ Այս դէպքում մենք ոչինչ չունենք ասելու...

Վերևում մենք մեծ պահանջներ արինք քննադատից։ Բայց մեծ մեծ բաներ սպասելուց առաջ, մենք կը կամենայինք, որ քննադատը վերաբերվէր հեղինակին ինչպէս հարկն է, գոնէ կարողանար առանց աղճատումների պատմել այն, ինչ ասել է հեղինակը։

Այս էլ բաւական կը լինէր մեզ...

Լ.

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՊԱՏԵՐԱԶՄԻ ՇՈՒՐՋԸ

—

Ծովապետ Տօգօի զեկուցումը։ Վօլգի գործակալութեան հեռագրում են Տօկիօից ծովապետ Տօգօի հետևեալ զեկուցումը. «Եապօնական հակա-ականային նաւախումբը մեկնեց մայիսի 31-ին, գիշերը, դէպի Պօրտ-Արտուր, ուր նրանց աջողվեց զանազան կէտերում ականներ ձգել և վերադառնալ անվնաս։ Մայիսի 29-ին, կէսօրին, երբ երկրորդ եապօնական հակա-ականային նաւախումբը երեք ականային նաւախմբերի հետ հարուածում էին ցամաքի վրա կանգնած, Սեաօպենդաօի մօտ, հակառակորդին, այն նպատակով, որ թեթևացնեն մեր բանակի հետախուզութիւնը, Պօրտ-Արտուրից յանկարծ դուրս եկաւ «Նովիկ» կրէյսերը 10 հակա-ականաւորով։ Տեղի ունեցաւ թունդ կռիւ երկու կողմից ևս։ Մեր նաւախումբերը փորձեցին հետզհետէ նահանջելով գրաւել թշնամուն աւելի հեռու, բայց նա ժամը 3-ին վերադարձաւ նաւահանգիստը։ Մեր կողմից վնասու

մեծ պարտութիւն են կրել Ցղին-Զժօուի հիւսիսում։ (Бирж. Вѣд.)

Պors-Արտուրի վիճակի մասին։ Զիֆուից հեռագրում են «Ռէյտ.»-ին գործակալութեան, թէ այդտեղ եկած մի ռուս վաճառական ասում է, որ Պօրտ-Արտուրը պաշարով լաւ հարուստ է։ Նրա մէջ կայ 9000 գլուխ տաւար. այն առևտրական տունը, որին պատկանում է վաճառականը, նուիրել է կառավարութեան 90,000 ֆունտ աղած միս և ուրիշ առևտրական տնեը նոյնպէս պէտք է հայթայթեն քաղաքին պաշար։ Վաճառականը զօրքի թիւը Պօրտ-Արտուրում հաշուում է 50,000 հոգի։ (Ռ. Ա.)

Շուլմին-Ցզիի կռիւը։ Եապօնական Ասախի լրագիրը ստացել է հեռագիր Շանխայ-Գուանից, յունիսի 1-ին, որի մէջ հաղորդվում է, թէ Շուլմին-Ցզիի մօտ, մայիսի 29-ին, տեղի է ունեցել արիւնահեղ կռիւ 7000 ռուսների և եապօնացիների միջև։ Կռուից յետոյ ռուսները երկաթուղիով գնացին Նիւ-Զուան, տեղաւորվելով 500 վագօնների մէջ. երկրորդ օրը, կէսօրին, հասան Նիւ-Զուան։ (Т. А.)

Ռուսական մի զօրախումբ գնացել է Պors-Արտուրի օգնութեան։ Մուկդէնից հաղորդում են, որ Պօրտ-Արտուրի պաշարված բերդի դրութիւնը թեթևացնելու համար, մանջուրական բանակի կազմից ուղարկվեց հարաւ մի զօրախումբ, բաղկացած այն զօրքերից, որոնք տեղաւորված են Դաշիչաօ կայարանի մօտ։ Այդ ուղարկված զօրախմբի պաշտօնը լինելու է գրաւել դէպի իրան հակառակորդի ոյժերի մի մասը և բացայայտել նրա զօրքերի համախմբումը։ Յունիսի 1 և 2-ին, այդ զօրախումբը դիմացաւ մի կուի հակառակորդի գերազանց ոյժերի հետ Վաֆանգօու կայարանի մօտ և այդպիսով կատարեց իր վրա դրված յանձնարարութիւնը, բաւականացնելով մեր ռազմագիտական դրութիւնը։ Եապօնացիների անմիտ յարձակումները, որ իրանց վրա ահագին կորուստներ նստեց և որի հետևանքն եղաւ հակառակորդի դրութեան բարւոքումը, մեր ձեռնհաս զինուորական պետերի կարծիքով, ցոյց են տալիս, որ եապօնական պետերի մէջ տարաձայնութիւն կայ և նրանք լաւ չեն իւրացրել ռազմագիտութեան սկզբունքները։ Արտուրի վիճակը երկիւղ չէ ներշնչում։ (Т. А.)

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—Մակեդոնիայից ստացված լուրերը շատ էլ մխիթարական չեն։ Սովը և կարիքը երկրի մէջ սաստկանում են։ Ամենից շատ աւերված տեղեր են թիւրքերի ձեռքով անցեալ տարի—Օխդիցան և Կաստորիան, ուստի սովը այդտեղ աւելի մեծ ծաւալներ է ընդունում. արդէն երևացել է տիֆ, որ սովի անխուսափելի ընկերն է։ Ժողովուրդը դադարել է յոյսը դընել ըէֆօրմների վրա. եթէ շուտով նրա յոյսերը չիրագործվեն և մանաւանդ նրան օգնութեան չը հասնեն և չը փրկեն սովից, ապստամբութիւնը նորից գլուխ կը բարձրացնէ։ Աւելի ևս անխիթար են Հայաստանից ստացված լուրերը։ Մուշ գնացած եւրոպական, այն է ֆրանսիական, անգլիական և ռուսական հիւպատոսները քննել են գործերի վիճակը և մանրամասն զեկուցումներ ներկայացրել իրանց դեսպաններին. այդ զեկուցումները լի են մանրամասնութիւններով այն սարսափելի գազանութիւնների մասին, որ ամեն օր թիւրքերը և քիւրդերը կատարում են հայ ժողովրդի դէմ։ Պատրաստվում է եղել մեծ կոտորած, որը, սակայն պէտք է յուսալ, հիւպատոսների գալուստով կը խափանվի։ Ստանալով հիւպատոսների զեկուցագրերը, ինչպէս հաղորդում են Պարիզից «Times»-ին, Կ. Պոլսի ֆրանսիական դեսպան պ. Կոնստանը անմիջապէս համաձայնվել է ռուսաց և բրիտանական դեսպանների հետ և երեքը միասին պատրաստվում են այժմ հաւաքական բողոք ներկայացնել սուլթանին գործերի դրութեան մասին Հայաստանում։ (Рус. Вѣд.)։

—Նէապոլի հավալսարանի պրոֆէսոր Օտտոֆօն-Շրէն նորերս գտել է թոքախտի բացիլը։ Այդ բացիլը, ըստ նրա հետազօտութիւնների, նման չէ ամենևին այն բացիլին, որ գտնվում է թոքերի մէջ, երբ նրան հարուածել է տուբերկուլոզը։ Երկու բացիլները բոլորովին տարբեր ձևեր ունեն և տարբեր յատկութիւններ։ Շրէնի ասելով, հմուտ կլինիցիստ բժիշկները ամեն ժամանակ, թէև չունէին գիտական ապացոյցներ, բայց միշտ հաստատել են, որ տարբերութիւն կայ տուբերկուլեոզի և թոքախտի (չախոտկայի) պրոցեսների մէջ։ Կոխի թէօրիայի անհիմն լինելը, որ երկու հիւանդութիւններն էլ համանման է ընդունում, Շրէնը այժմ վերջնականապէս հաստատված է համարում։ Գալով այդ գիւտի գործնական հետևանքներին, այն է թոքախտի բժշկութեան, Շրէնը արդէն մեծ վստահ է համարում այն, որ որոշվել է երկու տարբեր հիւանդութիւնների դիագնոզը և ոչ մի և նոյն հիւանդութեան զանազան ատիճանների։

—Երէկ, խօսելով ֆրանսիական պարլամենտում տեղի ունեցած հարցապնդումի մասին հայոց հարցի առիթով, մենք չը կարողացանք, տեղի սղութեան պատճառով, առաջ բերել մանրամասնութիւնները, որ այսօր քաղում ենք «Русскія Вѣдомости» լրագրից։ Մայիսի 27-ին կայացած պարլամենտի նիստում, պատգամաւոր Պրէբանսէն դիմեց արտաքին գործերի մինիստրին հարցապնդումով Հայաստանի դէպքերի մասին։ Նկարագրելով համառօտաբար գործերի դրութիւնը, Պրէսանսէն ցոյց տուեց, որ Բ. Դռան այժմ այլ ևս չի աջողվի, ինչպէս 1895-ին, շպրտել կոտորածների պատասխանատուութիւնը իրանց՝ հայերի վրա, որովհետև Եւրոպան այժմ շատ լաւ գիտակ է կատարվող դէպքերին։ Բ. Դուռը բաւական պարզ կերպով ցոյց տուեց իր պլանները նրանով, որ 1895-ի սխրագործութիւնների համար հեռացրված պաշտօնեաներին նորից պաշտօն է տուել Մուշում և Հայաստանի ուրիշ տեղերում։ Սասունի ժողովուրդը, որից խլում էին հացի վերջին կտորը, զէնքի դիմեց՝ պաշտպանվելու համար։ Թիւրքերը հարստահարում են հայերին և սպանում են նրանց սարերում ու դաշտերում։ Մինթէ Եւրոպան պէտք է հանդարտ դիտէ 1894 թ. դէպքերի կրկնութիւնը։ Իբրև եզրակացութիւն, Պրէսանսէն պահանջեց, որ կառավարութիւնը ծովային ցոյց սարքէ։ «Թող—ասաց նա, ակնարկելով այն ցոյցը, որ երկու տարի առաջ սարքվեց՝ ստիպելու համար Բ. Դռան պարտքերը վճարելու—չասեն, թէ ֆրանսիական էսկադրան թիւրքաց ջրերում ծառայում է միայն Տուրինի և Լօրանդօի շահերի պաշտպանութեան»։ Պատասխանելով այդ հարցապնդումին, արտաքին գործերի մինիստր Դէլկասէն պատասխանեց, թէ կառավարութիւնը երբէք չէ խնայել ջանքեր, ստիպելու համար Բ. Դրանը յարգել Բերլինի կոնգրէսի որոշումները Մակեդոնիայի և Հայաստանի վերաբերմամբ, խոստանալով այսուհետև ևս չը խնայել, բայց Պրէսանսէի նը-կարագիրը նա անուանեց չափազանցրած, կարդաց Կ. Պոլսի ֆրանսիական դեսպանի զեկուցագիրը, մատնացոյց արեց սուլթանի խոստումը և յայտնեց, որ Վանի ֆրանսիական հիւպատոսին հրաման է տրված չը հեռանալ Մուշից, մինչև որ ժողովուրդը կը հանգստանայ։ Այդպիսով Պրէսանսէի հարցապնդումը գործնական հետևանքներ չունեցաւ։

—Հայաստանում կատարվող դէպքերի մասին տեղեկութիւնները շատ ուշ են հասնում։ Միայն այժմ երևացին արտասահմանեան լրագիրների մէջ տեղեկութիւններ այն դէպքերի մասին, որոնք տեղի ունեցան ապրիլի կէսին և մայիսի սկզբին։ Ամենից լաւ գիտակ օրգանները—«Pro Armenia», «Humanité», «Times»—ներկայացնում են գործերի դրութիւնը այսպէս։ Գելիէկուզանում կուից յետոյ, Շէնիկ և Սէվալ գիւղերի մօտ հաւաքվեց 45 լեռնային գիւղերի ժողովուրդը։ Թիւրքերը և քիւրդերը ահագին քանակութեամբ պաշարեցին նրանց և նեղեցին ամեն օր, չը նայելով յուսահատ դիմադրութեան. երկու օր ապստամբները դիմացան, որ ժամանակ տան կանանց և երեխաներին գնալ աւելի անվտանգ տեղեր։ Երբ անզէն ժողովուրդը հեռացաւ մի փոքր խմբով, ապստամբները նահանջեցին դէպի Տալւորիկ։ Երկու գիւղ—Կօր և Կրմաս—անձնատուր եղան, վստահանալով թշնամու խոստմանը—նրանց բնակիչները կոտորվեցին։ Գլխաւոր մասը ամրացաւ Տալւորիկի մօտ կոտուր սարի վրա։ Նրա հետ կան շատ երեխաներ և ծերեր։ Թիւրքերը և քիւրդերը արշաւում էին նրանց ետևից։ «Times»-ի համարներից մէկում հաղորդված է նոյն իսկ, որ Տալւորիկը վերցրված է հինգշաբթվայ (՞) պաշարումից յետոյ և այդտեղ սպանվել է մօտ 5000 հայ։ Այս լուրը սակայն լաւ չէ կապվում միւս լուրերի հետ, բայց գործերի դրութիւնը, հաւանօրէն, շատ ծանր է եղել։ Հիւպատոսների Մուշ գալը, պէտք է յուսալ, կը կանգնեցնէ կոտորածը։ Մուշում կենտրոնացրած բանակներում հաւաքված են մօտ 3000 ծերեր, երեխաներ և կանայք։ Նրանց վիճակը սարսափելի է։ Սովը և հիւանդութիւնները ամեն օր տասնեակ զոհեր են տանում։

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐԸ

ՌՈՒՍԱՑ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

7 յունիսի

ԽԱԿՕՏԱՏԷ։ («Ռէյտէր»)։ Շանգհայից եկած ամէրիքական «Ջէյմս Ջոնսոն» նաւի կապիտանը հաղորդում է, որ յունիսի 5-ին Պուպարու Ջրանցքի արևմտեան մասում ռուսական կրէյսերը կանգնեցրեց և քննեց նրա նաւը։ Երկու ժամ բռնելուց յետոյ թոյլատրվեց նրան շարունակել ճանապարհը։

ՖԻՆԽՈՒԱՆՋԷՆ։ Եապօնացիները Սիւեանից յունիսի 3-ին գրաւեցին Սինկայլին, որը 23 մղոն դէպի արևմուտք է գտնվում։

ԼԵԱՕԵԱՆ։ («Ռէյտէր»)։ Վաֆանգօուի մօտ կուի ժամանակ 50 եապօնական թնդանօթներ ուղղեցին իրանց կրակը ռուսական դիրքի վրա. մանաւանդ սաստիկ էր շրապնէլի գործողութիւնը։ Կուի բաղդը վճռեց արտիլէրիան։ Ռուսներն անցան ձախ թևի ետևը, բայց եապօնացիները դիրքը փոխեցին և շարունակեցին յարձակումը երեք պաշտպանողական գծերով զարմանալի ամրացրած ռուսական դիրքի վրա։ Ռուսական զօրքերի բարոյական դրութիւնը հոյակապ է։ Գեներալ Կուրոպատկին իր կոչի մէջ հրաւէր է կարդում զօրքերին պահպանել վստահութիւնը։—Եապօնացիները պաշարման թնդանօթներ են դնում Պօրտ-Արտուրի մօտ։ Ռուսների նահանջումը հակառակորդի գերազանց ոյժի առջև Վաֆանգօուի մօտ և եապօնացիների յարձակումը ռուսական դիրքի արևելեան և հիւսիս-արևելեան կողմի վրա հիմք է տալիս ենթադրելու, որ հարաւ-արևելքում սպասելի է աւելի ևս մեծ կռիւ։ Մուկդէնում պատերազմական պատրաստութիւններ են տեսնվում մեծ չափով։

ԿԻԵՎ։ Կայացաւ սանատորիայի բացումը տուբէրկուլոզ ունեցող թոքախտաւորների համար։

ԿԻԵՎ։ Երեկ երեկոյեան ճանապարհ ընկան Իրկուտսկ հարաւ-արևմտեան երկաթուղիների 21-դ սիբիրեան զինուորա-սանիտարական գընացքը։ Գնացքը բաղկացած է գեղեցիկ կարգաւորված 14 պուլմանեան և երկու ծանրոցային վագոններից։ Գնացքում գտնվում են մէկ աւագ և երեք կրտսեր բժիշկներ, հինգ քոյրեր և մի քանի սանիտարներ։

ՎԼԱԴԻԿԱՒԿԱԶ։ Այսօր գիշերը կօզակ սպասաւորը կացնի գլխով գազանաբար սպանեց գօրսկօ-ժողովական գնդի հրամանատար գնդապետ Սկլեարովի անկողնում քնած կնոջը։

ՍԵՎԱՍՏՕՊՕԼ։ Էսկադրան գործնական պարապմունքների համար գնում է Տէնդրա կղզին։

Կ. ՊՕԼԻՍ։ Յունիսի 5-ին ստորագրվեց վերջնականապէս համաձայնութիւն ֆինանսների մինիստրութեան և օսմանեան բանկի միջև մակեդոնական ժանդարմերիայի վերակազմութեան համար տարեկան պահանջվելիք բիւդժէտի երաշխաւորութեան վերաբերմամբ։ Բ. Դուռը այդ համաձայնութեան պատճէնը անյապաղ ուղարկեց դաշնադիր պետութիւնների դեսպաններին։

ՎԻՍԲԱԴԷՆ։ Թիչ ժամանակից յետոյ կը բացվի սանատորիա ռուս վիրաւոր օֆիցէրների համար պրոֆէսոր Նորդէնի ղեկավարութեամբ։

8 յունիսի

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ Նոցա Մեծութիւնները յունիսի 6-ին ժամանեցին Պետերհօֆ ամարանոցը։

ՀԷԼՍԻՆԳՖՕՐՍ։ Յունիսի 7-ին գեներալ-նահանգապետի յուղարկաւորութիւնը շատ փառահեղ էր։ Կարգն օրինակելի էր։ Արտակարգ գնացքը՝ դիակով միասին՝ մեկնեց ժամը 4 և 40 րոպէին։

ՆԻԺՆԻ-ՆՈՎԳՈՐՈԴ։ Ծովապետ Սկրիդլովի անունով ուղարկվեցին մի քանի շնորհաւորական հեռագիրներ Վլադիվոստոկի կրէյսերական էսկադրայի փայլուն գործի առիթով։

ԲԵՐԼԻՆ։ «Berl. Tagebl.»-ի պատերազմական թղթակցի կարծիքով Պօրտ-Արտուրը կարող է դիմանալ առնուազը 4 ամիս։

ԼՕՆԴՕՆ։ (Բերլինի վրայով)։ Գեներալ Կուրոպատկինը շարժվում է դէպի հարաւ, որպէս զի կորէ եապօնացիների ճանապարհը, որոնք Սիւեանից շարժվում են առաջ՝ նպատակ ունենալով յարձակվել գեներալ Շտակելբերգի զօրագնդի վրա։

ՏՕԿԻՕ։ (Ռէյտէր)։ Սիմօնոսէկիի մօտերը լսվում է ծովի կողմից թնդանօթաձգութիւն։ Ինչպէս երևում է, Վլադիվոստոկի էսկադրան նորից կօրէական նեղուցումն է գտնվում։

ԼԵԱՕԵԱՆ։ Ստացվել են նորանոր տեղեկութիւններ հարաւում եղած ճակատամարտների մասին։ Ասում են, որ Զայչժօուի մօտերը ճակատամարտ է տեղի ունենում այժմ։ Վիրաւորներով լիքը գնացքը անցկացաւ դէպի հիւսիս։ Սպասում են ուրիշներին։

Կ. ՊՕԼԻՍ։ Պարսկական երկու իշխաններ, Շահի որդին և եղբայրը, փախան Թէհրանից։ Փախուստի պատճառն է Շահի կեանքի դէմ եղած մի մեծ դաւադրութիւն։ Իշխանները խառնված են այդ դաւադրութեան մէջ։ Ձերբակալված են շատ բաբիստներ։ Պարսկական թագաժառանգը յայտարարեց, որ երկու իշխաններն էլ զրկված են աստիճաններից և կոչումներից՝ Շահի հրամանով։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ «Русь» լրագրի հատով վաճառելը նորից թոյլատրված է յունիսի 8-ից։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ Գեներալ-ադիւտանտ Կուրոպատկինի հեռագիրը 1904 թուի յունիսի 5-ից. «Գեներալ Շտակելբերգը զեկուցանում է, որ հակառակորդը Վաֆանգօուից առաջ չէ շարժվել։ Տեղեկութիւններ կան, որ նրա զօրքերը տարածված են Վաֆանգօու-Ֆուչժօու գծի երկարութիւնով։ Երկօրեայ պատերազմից և լեռնային դժուար ճանապարհներով երկու գիշերվան յոգնեցուցիչ տեղափոխութիւններից յետոյ՝ զօրքերը կարողացան հանգստանալ։ Ոգու տրամադրութիւնը շատ կայտառ է։ Կորուստների մասին ճշգրիտ թուեր դեռ չեն կարողացել հաւաքել, որոշ տեղեկութիւններ կարելի է տալ միայն հետևեալ մասերի մասին. արևելեան-սիբիրեան հրացանաձիգ դիվիզիայի գնդերում համարվում են 15 օֆիցէր սպանված, 49 վիրաւոր և պատերազմի դաշտում մնացած,—վիրաւոր, թէ սպանված՝ անյայտ է,—12. սպանված են 386 զինուոր, վիրաւորված՝ 992. պատերազմի դաշտում մնացել են—անյայտ է՝ վիրաւոր, թէ մեռած,—568. այդ թուից ջոկ, հաւանօրէն, մի մասը՝ գնդերի հաշուից դուրս՝ ուղարկված է երկաթուղով. 33, 35 և 36-դ գնդերում սպանված է 1 օֆիցէր և 120 զինուոր. վիրաւորված 19 օֆիցէր և 604 զինուոր. պատերազմի դաշտում մնացել են, յայտնի չէ՝ վիրաւոր, թէ՞ սպանված՝—96 զինուոր. առաջին թնդանօթաձիգ բրիգադից պակասել են 10 օֆիցէր և 103 զինուոր. 9-դ թնդանօթաձիգ բրիգադից պակասել են՝ 1 օֆիցէր և 25 զինուոր. տօրօլեան գնդից սպանված են 1 օֆիցէր և 3 զինուոր, վիրաւորվել են. 1 օֆիցէր և 40 զինուոր. անյայտացել են 3 հոգի, մօրշանեան գնդում սպանված են (?) 6 օֆիցէր, 11 զինուոր. վիրաւորված են 131 հոգի, անյայտացել են—8»։—Գեներալ Սախարովի հեռագիրը գլխաւոր շտաբին 1904 թուի յունիսի 6-ից. «Յունիսի 3-ին սկսեցին երևալ եապօնացիների շարժվելու պատրաստութեան նշանները Սիւեանից բոլոր ճանապարհներով, որ տանում են դէպի Խայչէն, դէպի Դաշիչաօ կայարանը և դէպի Գայչժօու։ Առաջին ճանապարհի վրա նրանց առաջատար մասերը բռնել են Նանձեաբէյի և Պասչալիւի միջև եղած լեռնանցքը, հարաւին երրորդ ճանապարհի վրա թշնամու առաջատար մասերը մօտեցան Խիւնեակ և Տամեարլօգօու գիւղերին. առաջապահը գրաւեց Զապարլին լեռնանցքը, իսկ գլխաւոր ոյժերը՝ 5 գնդաչափ հետևակ ու ձիաւոր և լեռնային արտիլերիա՝ դասաւորվել էին Նիանցգօու լեռնանցքի և Կխանզալի միջև։ Վերջին օրերը մեր առաջնութաց խմբերը այդ ճանապարհների վրա պահում էին թշնամու առաջխաղացութիւնը, որի ժամանակ սպանվել և վիրաւորվել են 10-ի չափ զինուորներ և գերի են վերցվել վիրաւոր խօրունժի Նաղարօվը և նրա հետ վիրաւորված 3 կօզակները։ Յունիսի 4-ին յայտնվել է, որ Սէլիւջանի մօտ երևացել են եապօնական միայն խուզարկուները, որոնք հրաձգութիւնից յետոյ իսկոյն յետ են քաշվել դէպի Ֆինխուանչէն։ Երէկ երեկոյից սկսած յունիսի 6-ի ամբողջ օրը անձրև է գալիս»։—Գեներալ-ադիւտանտ Կուրոպատկինի հեռագիրը Նորին Մեծութեան 1904 թուի յունիսի 6-ից. «Թշնամին Սայմաձիի և Ֆինխուանչէնի կողմից կանգ չառաւ, այլ յետ քաշվեց։ Նամաքրել է Ֆինխուանչէնից հիւսիս նորերս իր գրաւած մի քանի կէտերը։ Եապօնական զօրքերի սկսած շարժումը դէպի Դալինեան լեռնանցքը դադարեց, բայց բացվել է եապօնական բաւական նշանաւոր ոյժերի շարժումը Սիւեան-Դայչժօու կամ Սիւեան-Տաշիչաօի ուղղութիւնով»։—Գեներալ Ժիլինսկու հեռագիրը զինուորական մինիստրին 1904 թուի յունիսի 6-ից. «Պօրտ-Արտուրից եկած լուրերի համեմատ, եապօնական 3 բատալիօն սկսեցին լեռներով առաջ շարժվել Սեաօբինդաօից դէպի Լուինատաու։ Մեր երկու կազաւոր խմբերը՝ շտաբս-կապիտան Լիւբինսկունը և պրապորշչիկ Դիատրօպովինը, և սահմանապահների մէջ վաշտ կանգնեցրին նրանց առաջխաղացութիւնը։ Թշնամու ականանաւերը ռմբակոծում էին դիտելու կայարանը. երբ մօտեցան «Նովիկն» ու մեր ականանաւերը և կրակ բաց արին, թշնամու նաւերն սկսեցին շտապով հեռանալ։ Թընդանօթաձգութիւնից յետոյ թշնամու զօրասիներն սկսեցին հեռանալ. մնացին մի քանի նօսր շղթաներ։ Փոխ-գնդապետ Կիլենին պաշտպանութեան համար առաջ քշեց երկու վաշտ և յետ տարաւ կամաւորներին։ Մայիսի 31-ին այդ լեռներից աւելի արևելք կամաւորները յետ քշեցին եապօնացիներին իրանց երկու շարք դիրքերից. մեզանից սպանվել են պօրուչիկ Բիցէվը և մէկ հրացանաձիգ։ Վիրաւորվել են պօրուչիկ Զլօբինսկին (մեռաւ վէրքերից) և չորս զինուոր»։ Փոխ-ծովապետ Սկրիդլովի հեռագիրը Նորին Մեծութեան՝ յունիս 7-ից. «Կրէյսէրների նաւախումբը Վլադիվոստոկ վերադարձաւ, չունենալով ոչ մարդկանց կորուստ, ոչ էլ վնասումներ»։

8 յունիսի

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ Ներքին գործերի մինիստրը որոշեց 8 ամսով դադարեցնել «Сѣверный Край» լրագիրը։—Նշանակված են. գեներալ-լէյտէնանտ Միշեռիչը՝ գվարդիական զօրքի և Պետերբուրգի զինուորական շրջանի շտաբի հրամանատար. գեներալ-մայիօր Պետրովիչը՝ Ուստվիխնան բերդի հրամանատար։

ՏՕԿԻՕ («Ռէյտէր»)։ Եապօնական բանակի

գլխաւոր ուժերի կողմից յունիսի 5-ին Դագուշան ուղարկված հետևակ և ձիաւոր առաջապահ գունդը զեկուցանում է, որ ինքը մտել է շփումի մէջ ռուսական զօրքերի հետ Զապայլենի մօտերը, Սիւեանից 36 մղոն դէպի արևմուտք։ Յունիսի 7-ին ռուսական նաւերը չերևացին Կօրէական նեղուցում. ենթադրում են, որ նրանք գնացել են դէպի հիւսիս։ Ռուսական կորուստները Վաֆանգօուի մօտ եղած ճակատամարտում 2000 սպանված մարդուց աւելի է։ Օեամա մարաջախտը նշանակված է Մանջուրիայի փոխարքայ և այնտեղ գործող բոլոր զօրքերի գեներալիսսիմուս։ Գեներալ Կօտաման նշանակված շտաբի հրամանատար։ Մօտ ժամանակներս նրանք կը մեկնեն պատերազմի դաշտը։ Եամագատա մարաջախտը կը մնայ Տօկիօում իբրև գլխաւոր շտաբի հրամանատար։

ԻՆԴԻԱՆՕՊՕԼԻՍ («Ռէյտէր»)։ «Ինդիանօպօլիս Նիւս» լրագրի թղթակիցը հեռագրում է Զիֆուից, որ Պօրտ-Արտուրի պաշարումն էական չէ. կենսական մթերքներ մշտապէս ստացվում են Չինաստանից։ Զօրքերի և բնակիչների առողջութիւնը լաւ է։ Թղթակիցը յայտնում է, որ Պօրտ-Արտուրի շուրջը շինված են ահագին նոր ամրութիւններ։ Բերդի բերդապահների թիւն է 50—60 հազար։ Թղթակցի կարծիքով՝ բերդն անմիջապէս առնելու ոչ մի վտանգ չը կայ։

Կ. ՊՕԼԻՍ (Կօրր. Բիւրօ)։ Բ. Դուռը խիստ հրաման ուղարկեց Բիթլիսի վալիին. յետագայ բռնաբարութիւնների առաջն առնելու և քրդերին զսպելու նպատակով Դիարբեքիրից կոչված են բէդիֆներ։ Կործանված տները վերաշինելու համար Բ. Դուռը յատկացրել է 3,600 թուրքական լիրա։

ՄՕՍԿՎԱ։ Բժշկ Բօտկինը հեռագրում է Եվգենիեվսկից, որ նա այցելեց Մօսկվայի քաղաքային հիւանդանոցը Սպասսկում, որի մէջ կայ 500 հիւանդ, որոնցից 150-ը Տիւրէնչէնի մօտ վիրաւորվածներ են։ Խնամատարութիւնը և սարք ու կարգը գերազանց է։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ Բարձրագոյն հրամայված է. Պարիզի դեսպանութեան խորհրդական Նարիշկինին լինել Հռոմի պապի մօտ դեսպան. Խարկովի նահանգի գիւղատնտեսութեան տեսուչ Շիմկովին՝—լինել Մօսկվայի գիւղատնտեսական ինստիտուտի դիրեկտոր. Ֆինանսների մինիստրութեան յատուկ յանձնարարութիւնների պաշտօնեայ Պոզդնէեվին՝—լինել արևելեան ինստիտուտի դիրեկտոր։

ՀԷԼՍԻՆԳՖՕՐՍ։ Գեներալ-գուբերնատորին վերջին յարգանքը մատուցանելու համար հաւաքվել էր Հէլսինգֆորսի և Սվէաբորգի բոլոր ռուս հասարակութիւնը. տեղական ինտելիգենցիայի ներկայացուցիչների թւում գտնվում էին մի քանի սենատորներ, մի քանի գլխաւոր վարչութիւնների պետեր և եկեղ. լանդ-սեկրետարներ։ Ժամը 4 և 30 րոպէին արտակարգ գնացքը շարժվեց, տանելով սպանված գեներալ-նահանգապետի նշխարները Պետերբուրգի մօտ գտնվող Սերէեվսկի վանքում թաղելու համար։

ԼՕՆԴՕՆ։ («Ռէյտէր») Էդուարդ թագաւորի Կիլ քաղաքում մնալու ժամանակի չափը դեռ վերջնականապէս չէ որոշված. ենթադրում են, որ թագաւորը Կիլում կը մնայ մի շաբաթից աւելի։

ՊԱՐԻԶ։ Դրէյֆուսի գործի առիթով կատարվող քննութիւնը հաւանօրէն կը վերջանայ յուլիսի սկզբին։—Ազգային ժողովը ընդունեց զինուորագրութեան օրէնքը մինչև 32-դ յօդուածը։

ԲԵԼԳՐԱԴ։ Նախկին մինիստր Ռօդոսլաւլիչը դատապարտված է 18 ամիս բանտարկութեան և պետական կալուածներից մէկի կապալադրաւը յափշտակած լինելու պատճառով՝ 40,000 դինար վնասը վճարելու։

ՅԷՏԻՆԻԷ։ Սերբիական թագաւորի կաբինետի գլխաւոր Նենադովիչը Զերնօգորիայի իշխանին հանդիսաւոր ունկնդրութեան ժամանակ յանձնեց Կարագէօրգիի շքանշանի աստղը։

Խմբագիր՝ ԱԼԷՔՍԱՆԴՐ ՔԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչներ՝ ԹԱԳՈՒՀԻ ՏԻԳՐԱՆԵԱՆ
ԻՍԱՀԱԿ ՄԷԼԻՔ-ԱՂԱՄԱԼԵԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Լոյս տեսաւ
ՊԱՏՄԱԳԻՐՔ ՀԱՅՈՑ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԵԱՆ
մի գիրքը—
ՂԱԶԱՐ ՓԱՐՊԵՑԻ
ձեռագիրների բաղդատութեամբ։
Գինն է ճանապարհածախսով 1 ռուբլի։
Դիմել կենտրոնական և Գուտտէնբէրգ գրավաճառանոցները։ (Ե. ո.) 4—10

Լոյս տեսաւ
ՅՈՎ. ՍՏԵՓԱՆԵԱՆԻ
ՎԱՄՊԻՐՆԵՐԻ ԶՈՀԸ
էջ 32, գինը 5 կ.։
Գումարով գնողներին զիջում է անվում։
Դիմել՝ Баку, Степану Оганесянцу. Николаевская ул. магазинъ Григорія О. Саркисова. 1—1

Լոյս է տեսել արդէն
ԺԱՄԱՆԱԿԸ ՈՍԿԻ
Հանրամատչելի, պատկերազարդ գիրք. փոխադրութիւն գերմաներէնից Ֆամալեանց Ս-ի, 165 երես։ գինը 40 կօպէկ։ Հարցնել Թիֆլիսի գրավաճառանոցներում, ուր վաճառվում են նոյնպէս հետևեալ գրքերը՝ Ծովինար 20 կօպ. Հէֆիաթներ 30 կ.։ Երկու աղբերացեղ (Խարազի տղայ) 30 կ. Ասուած աղխատի կերպում 20 կ. Շեն թագաւորի աղջիկը 20 կ.։ Ասուած չը ճանաչող 10 կ.։ Երկեր, փոքր գրուածներ 40 կ.։ Անմեռ Աշխարհ 8 կ.։ Գալօ ափօ և Խուլ խաչիկ սպառուած են։ (Եր. ու.) 1—10

Լոյս տեսաւ
Ցարութիւն Թումանեանցի
ԱՐՑԱԽԱԶԴ Բ.
Պատմ. ֆէէրիա չորս պատկերով
Գինն է 30 կօպ.
Նոյն հեղինակի «Մուսա» II նուագ, Գինն է 20 կօպ.։ Դիմել Թիֆլիսի գրավաճառներին կամ Тифлисъ, Чавчавадзевская ул. домъ Маркарова № 25а, Арутюну Туманянцу. 1—2

ԹԻՖԼԻՍԻ ԺՈՂՈՎԱՐԱՆ
Յայտնում է ի գիտութիւն պ.պ. անդամների, կանդիդատների և ժամանակաւոր այցելուների, որ յունիսի 4-ից ժողովարանի շէնքում կը նուագէ լարաւոր գործիքներով նուագախումբը. երեքշաբթի օրերը՝ համերգային բաժանմունք, ուրբաթ օրերը՝ սիմֆոնիական ժողովներ, իսկ շաբաթ օրերը նշանակված են ընտանեկան երեկոյթներ և կը նուագեն զինուորական խումբը և սաղանդարները։ Սկիզբն է երեկոյեան ժամը 9-ին։ Հիւրերը վճարում են մէկ-մէկ ռուբլի, ընդհանուր ձևով։ 5, 9, 11 2—3

ԲԺ. Վ. ԱՐԾՐՈՒՆԻՆ
Անցեալ տարիների օրինակով, այս ամառ էլ տեղափոխվել է կովկասեան հանքային ջրերը, ՊԵՅՏԻԳՕՐՍԿՈՒՄ, որտեղ ընդունում է հիւանդներին։ Пятигорски, Верхній бульваръ, д. Кн. Гирей. (Չ. շ.) 3—10

ԲԺԻՇԿ
Ա. ՄԽԻԹԱՐԵԱՆ
Ամառվայ ընթացքում սկսած յունիսի մէկից ընդունում է Ալէքսանդրօպոլում մասնաւորապէս սիֆիլիս, սորթու, վենէրական և վիրաբուժական ախտ ունեցող հիւանդներին. Պուշկինսկի փողոց (Пушкинская ул. № 59) սեփական տուն, № 59. 2. Չ.

ԿՐՕՆԻ ԴԱՍԱԳՐԵՐ
Աշակերտաց համար

	Ր.	Կ.	
1. Դասատետր կրօնի I տարի	—	25	25% զ.
2. » » II »	—	20	
3. » » III »	—	30	20% զ.
4. Հին-ուխտ (ընդարձակ)	—	45	
5. » (համառօտ)	—	35	15% զ.
6. Նոր-ուխտ	—	40	
7. Գործք առաքելոց	—	40	
Ուսուցչաց համար			
8. Ուղեցոյց (մեթոդիկայ) հին-ուխտի	1	75	
9. Ուղեցոյց (մեթոդիկայ) նոր-ուխտի	2	5	35% զ.
10. Ուսուցումն քրիստոնէական կրօնի Դ.	1	50	
11. Ուսուցումն քրիստոնէական կրօնի Ե.	—	50	

Յանկացողները կարող են դիմել հետևեալ հասցէով.
1) Тифлисъ, священнику С. Саакянцъ, Ком. мерческое училище.
2) » Книжный магазинъ «Гуттенбергъ»
3) » » «Центральный».

Դասագրքերիս պահեստը ամառս գտնվում է պ. Ալէքսանդր Ամիրաղեանցի մօտ (Карвансарай Тамамшева мануфактурный магазинъ А. Амирагова).
Յանկացողները նրանից ևս կարող են պահանջ անել։
Սահակ քահ. Սահակեանց
յ. ա. օ. յլ.—օ. օր-մէջ ս. ա. օ. 7—66

ԲԺՇԿԱՊԵՏ
Գր. ՏԷՐ-Գրիգորեանց
ընդունում է հիւանդներին—ներքին (մասնաւորապէս կրծքի) և երեխայոց հիւանդութիւնների. ունի բէնտգէնեան կաբինէտ. 154. Միքայէլեան պրոսպէկտ, տելէֆոն 825.
(Շ. Ե. Հ. Չ.) 45—105

ՏԻԿԻՆ Մ. ՄԱԿԱՐԵԱՆԻ ՄՐՑԱՆԱԿԻ ՅԱՆՁՆԱԺՈՂՈՎԸ
յայտարարում է ի գիտութիւն բոլոր հայ գրագէտների, որ հանգուցեալ տիկին Մակարեանի կտակի համաձայն հայերէն լեզուով գրված ինքնուրոյն թատերական երկի համար մրցանակ նշանակված է այս տարի 150 ռուբլի։
Մրցանակին մասնակցելու պայմաններն են.
1) Գրուածքը պէտք է լինի հերէն և նայ որ, դեռ ոչ մի հայկական բեմի վրա չը ներկայացված կամ միայն վերջին սեզօնում մի անգամ խաղացված։
2) Գրուածքը պէտք է ուղարկել Թիֆլիսի Հայոց Դրամատիկական ընկերութեան վարչութեան հասցէով։ (Барятинская, № 8, княгинѣ М. М. Тумановой.
3) Գրուածքը պէտք է ուղարկվի մինչև ներկայ տարվայ օգոստոսի 20-ը. այդ թուից յետոյ հասած պիէսը կը մնայ հետևեալ տարվայ մրցութեան։
4) Գրուածքը կրելու է իր վրա հեղինակի որոշած կեղծ անունը և հետն ունենալու է նոյն կեղծ անունը կրող մի երկրորդ փակ ծրար, որի մէջ պէտք է լինի հեղինակի իսկական անունը և հասցէն։ Երբ գրուածքը դատվի մրցանակի արժանի, այն ժամանակ կը բացվի երկրորդ ծրարը և կիմացվի հեղինակի իսկական անունն ու հասցէն։ Մրցանակի արժանի չը դատված երկերի անունները յանձնաժողովը՝ առանց երկրորդ ծրարը բանալու և հեղինակի իսկական անունը իմանալու, կը յայտարարէ, որ տէրերը բարեհաճեն որ և է ձևով յետ ստանալ։
(Ե.) 3—5

Թէհրանի «ՓԱՐՈՍ» ակցիոներական ընկերութիւնը պէտք ունի իր տպարանի համար
**ՄԻ ՀՄՈՒՏ ԳՐԱՇԱՐԻ
ՄԻ ՎԱՐՊԵՏ ԿԱԶՄԱՐԱՐԻ
և ՄԻ ՏՊԱԳՐԻՉԻ (նակլադչիկ)։**
Կը տրվի ճանապարհածախս։ Ձեռնտու ռոճիկներ։ Ցանկացողները կարող են դիմել հետևեալ հասցէով և առաջարկել իրանց պայմանները.
Administration de l'Jmpprimerie «Pharos», Téhéran. Կ. Ե. Հ. Շ. 10—10

ՎԻԵՆՆԱ. ԲԺ. Պ. Մ. ԱՓՐԻԿԵԱՆ
Կազմում է խորհուրդներ տեղիս մասնագէտ-պրոֆէսօրների հետ Ռուսաստանից եկող հիւանդների համար։
Հասցէն Wien, Spiegelgasse, 3, IVstock. 38—50

ԲԺՇԿԱՊԵՏ
Տ. ԳԷՈՐԳ-ԲԷԳԵԱՆ
ԱԶՔԻ ՀԻՒԱՆԴՈՒԹԻՒՆՆԵՐ
Ընդունելութիւն ամեն օր.
Առաւօտեան ժամի 9-ից մինչև 12
Երեկոյեան » 5-ից մինչև 7
Վելիամինովսկայա փ. № 16, տուն Եղիազարեանի։ 80—100

Բժշկ. Բ. Նաւասարդեան
որ գտնվում է ՐՕՍՏՕՎ քաղաքում
Հիւանդներին ընդունում է 11—1 ժ. առ. և 7—8 ժ. երեկոյեան։
Б. Садовая, 136, д. Бакалова.
(Ռ. Կ. Ե. Հ.) 23—100

Կենտրոնական գրավաճառանոցում
վաճառվում են հետևեալ նոր գրքերը՝
Առաքելեան Հ., Անգլիայի քաղաքական և հասարակական կեանքը, Թիֆլիս, 1904 թ. գ. 15 կ.
Բուդուղեան բժ. Ա., Մտերմական խորհուրդներ պատանիներին (օնանկանութեան դէմ և այլն), Թիֆլիս 1904 թ. գ. 20 կ., Ուր ծախվում են այս բժշկի միւս գրքերն ևս։
Մէնդիս պրօֆ., Կրօնի պատմութիւնը, նախնական հաւատալիքների նկարագիրը և կրօնական մեծ սիստեմների բնոյթը, Թիֆլիս 1904 թ. գ. 1 ր. 25 կ.
Սաթունեան Ն. և Ջանումեան Գ.., Ոսոիկ, հայ կանանց ժողովածու Գ. Ջանշեանի յիշատակին, Աղէքս. 1904 թ. գ. 70 կ.
Սմբատով Ա. իշխ., Դաւաճանութիւն, դրամատիկական լեգենդա Վրաստանի անցեալից 5 գործող., Թիֆլիս 1904 թ. գ. 50 կ.
Վրձին (Ա. Քալանթար), Մանրանկարներ, հատ ա. և բ., Թիֆլիս 1903 թ. գ. 1 ր. 50 կ.
Ղազարեան Գ., Մեղուաբուծութիւն, նկարներով, Վաղարշապատ գ. 50 կ.
Մելիք-Շահնազարեան Կ., Վաղի մշակութիւնը, պատկերազարդ, Թիֆլիս գ. 1 ր.
Շանթ, Դերասանուհին—40 կ., Դարձ—40 կ., Վիրժին—60 կ. և Երազ օրեր—40 կ.
Պոօշեան Պ., Սօս և Վարդիթեր, վէպ, գ. տիպ, Բագու գ. 1 ր. 20 կ.
» Յունսն վիպակ Թիֆլիս գ. 1 ր.
Դիմել՝ Въ Тифлисъ, въ Центральную Книжную Торговлю. (Երբ.) 2—5

„Գուտտէնբերգ" գրավաճառանոցում վաճառվում են

Բոլ նաւապետ, Ա. Դիւմայի. թարգմ. Թ. Ճերմակեան	—	70
Տանօրեակ, Բօկաչիօի. ազատ թարգմ. I և II հատոր.	2	—
Յովհաննա Բարուհի, Է. Ռիտիսի, թարգմ. Գ. Խօրասանեան	—	60
Պատմութիւն հայ լրագրութեան ի սկզբանէ մինչև մեր ժամանակը, Հ. Գրիգորիս Վ. Գալէմքեարեան	1	—
Հայ գիւղական տունը, Փ. Տէր-Մովսէսեանի, 55 պատկերով	1	—
Տխուր վայրկեաններ, Ա. Մայիլեանի	—	5
Քնարիկ, մանկական երգեր, պարերգեր և աղօթքներ փոքրահասակ մանուկների համար, Ղ. քահանայ Յովսէփեանի	2	—
Նորեկ, վէպ, (արտատպած «Մուրճ» ամսագրից). Գ. Բաբիկեանի	—	70
Աբրեցողի զատիկը, Յ. Եսայեանի	—	3
Մտերմական խորհուրդներ պատանիներին, բժ. Ա. Բուդուղեան	—	20
Դաւաճանութիւն, 5 գործող. իշխան Ա. Սմբատովի, թարգմ. Զ. Տէր-Գրիգորեանց	—	50
Կուրութեան պատճառները, արտատպած «Մշակ»-ից բժ. Բ. Օ.	—	3
Լուսաւորն Բեթլեհէմի, Մ. Յ. Գօչունեանէի	—	20
Երեք մոգեր, արտատպած «Աղբիւրից». փոխ. Յ. Կարապետեանի.	—	10
Կնոջ գաղտնիքը, Մ. Սերաօի. թարգմ. Գ. Բաբուրեանց	—	3
Ճշմարիտ մեծութիւնը (Արևելեան աւանդութեան)	—	7
Սնապաշտութիւն և կախարդութիւն. բժ. Ա. Բուդուղեանի.	—	20
Դրախտի ընտանիք, Խրլմեան Հայրիկի.	—	60
Ալէգիր, պատմավէպ պարսիկների կեանքից Վ. Փափազեանի	—	50
Մեծ փականք և առիւծի մահը. » »	—	3
Սիրաք և Սամուէլ, բարի հօր կրթական դասեր, Խ. Հայրիկի	—	50
Ֆուլտոն և Ստեֆենսոն, Ն. Զիգիանեանց	—	15
Հրաշալի դար, պրոֆ. Ռ. Ա. Ռօլլէսի. թարգմ. Ստ. Լիսիցեան	—	80
Հայրեր և զաւակներ, Ի. Տուրգենեվի. թարգմ. Մ. Վարդապետ	—	75
Քրիստաֆօր Կարա-Մուրզա. (նրա կեանքն ու գործունէութիւնը) Յով. Կարապետեանի	—	60
Հայոց կրօնական բանաստեղծութիւն, Դ. Խաչկոնց	—	60
Սուտի հոգեբանութիւնը, Գար. Ենգիբարեան	—	10
Ոսոիկ, հայ կանանց ժողովածու Գ. Ջանշեանի յիշատակին.	—	70
Ատաճեր և նոցա առողջապահութիւնը, Մ. Մ. Մարգարեանի	—	20
Միքայէլ Ղազարեան Նալբանդեանցի կենսագրութիւնը, Եր. Շահազիզի.	1	—
Վարդապետ, Լեհաստանի հայերի պատմութեան վերջին երեսը, թարգմ. Մ. Բարխուդարեանց.	—	20
Ծաղիկ և պատուաստ 5 նկարով, բժ. Վ. Արծրունի	—	15
Ցաւագարը, Շիրվանզադէի	—	50
Փիղ. կազմեց օր. Շ. Տ.—Ն.	—	8
Բանաստեղծութիւններ. Աւ. Իսահակեանի	1	—
Ուղեցոյց Անի քաղաքի և շրջակայ աւերակաց (ճանապարհորդների համար). Ա. Մխիթարեանի	—	20
Грамматика древнеармянскаго языка. Этимологія. Н. Марръ.	2	—
Արծաթ մանէթի պատմութիւնը. մանկական ղրոյց Տօպէլիուսի. թարգմ. Գ. Շահրուդաղեանց	—	15
Արուեստ ատենախօսութեան ի պէտս ազգային վարժարանաց, Մ. Ս. Գաբրիէլեանի.	1	50
Կեանքը ծովերի խորքում. Լունկեվիչի, թարգմ. Ստ. Մալխասեանի	—	30
Նոր կենդանաբանութիւն և մարդաբանութիւն պատմական և նկարագրական Հ. Ս. Երեմեանի	1	50

Դիմել՝ Книжный магазинъ „Гуттенбергъ" (Дворцовая), Г. Галустяну. 2—2

Дозволено Цензурою. Тифлисъ, 8-го іюня 1904 г. Հպարտ «ՀԵՐՄԻՍ» Типографія «ГЕРМЕСЪ» С. Назарянца, Мих. пр. № 81